

# Արմկոն 2021 | Դեպի Վեր

Սկսնակ ֆանտաստ գրողների թվով 3-րդ մրցույթը:

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

**Ժանր`** Ֆանտաստիկա, ֆենթազի, դրանց բոլոր ենթաժանրերը

**Մրցույթի կարգախոսը`** Դեպի Վեր

**Լեզուն`** Հայերեն

**Աշխատանքների ընդունում`** Մայիսի 1 - օգոստոսի 1, 2021թ.

**Մեկ մասնակցի կողմից ներկայացվող աշխատանքների քանակը`**  
անսահմանափակ

**Աշխատանքների մասնակցությունը մրցույթին`**

- Աշխատանքը պետք է համապատասխանի մրցույթի կարգախոսին
- Այլ մրցույթներին ներկայացվող, ներկայացված կամ նախկինում հրապարակված աշխատանքները /ներառյալ սոցիալական ցանցերում/ չեն կարող ներկայացվել մրցույթին
- Աշխատանքի ծավալը պետք է լինի **նվազագույնը 15 հազար նիշ, առավելագույնը` 30 հազար նիշ**, ներառյալ բացատները
- Աշխատանքը պետք է լինի խմբագրված և սրբագրված
- Աշխատանքի տառաչափը` 12, միջտողային հեռավորությունը` 1,5, տառատեսակը` UNICODE համակարգի

Վիճելի դեպքերում վերջնական որոշումը կայացվելու է ԱրմԿոնի կազմ.կոմիտեի կողմից:

**Աշխատանքների հրապարակումը`** մրցույթի չափանիշներին համապատասխանող **բոլոր** աշխատանքները հրապարակվելու են մրցույթի պաշտոնական կայքում /լինկ/ ինչպես նաև facebook էջում /լինկ/: Մրցույթում հաղթած 15 աշխատանք հրատարակվելու է` ժողովածուի ձևով

**Մասնակիցների տարիքային սահմանափակումը`** մասնակիցը պետք է լինի 18 տարեկան կամ բարձր

## 2. Ինչպես դիմել

Աշխատանքները ուղարկել [armconcontest@gmail.com](mailto:armconcontest@gmail.com) հասցեին «Արմկոն. Կեղծանուն. Աշխատանքի անվանում» թեմայով և կցել աշխատանքը \*.pdf, \*.docx ֆորմատով: Ֆայլը

պետք է կրի «Ձեր կեղծանունը- աշխատանքի անունը» անվանումը: Նամակում հարկավոր է նշել հեղինակի մասին հետևյալ տեղեկությունը՝

- Անուն ազգանունը և կամ գրական կեղծանունը (ըստ ցանկության)

- Տարիքը

- Բնակության հասցեն

- Հեռախոսահամար

- Աշխատանքի վերնագիրը

Այն հայտերը, որոնք չեն պարունակի նշված տեղեկատվությունը, կարող են մերժվել:

**Աշխատանքների գնահատումը** իրականացվելու է մասնագիտական փորձառու ժուրիի կողմից: Ժուրիի կազմը կիրապարակվի մրցույթի կայքում:

### **3. Մրցույթի ժամկետները**

**Աշխատանքների ընդունման սկիզբ՝**

Մայիս 1 2021

**Աշխատանքների ընդունման ավարտ՝**

Օգոստոսի 1 2021

**Մրցույթի արդյունքների հրապարակում՝**

Օգոստոսի 30 2021

### **4. Աշխատանքների տպագրությունը. մրցանակներ**

Լավագույն 15 աշխատանքը Բուկինիստ գրախանութի աջակցությամբ կտպագրվի ժողովածուի տեսքով:

Հնարավոր են մրցանակներ՝ առանձին հովանավորների կամ ժուրիի անդամներից կողմից:

## 5. Լրացուցիչ տեղեկատվություն

- Գաղտնիությունը պարզադիր չէ՝ յուրաքանչյուր մասնակից ազատ է ներկայանալ իրական անունով կամ կեղծանունով: Ժյուրիի անդամների համար անանունությունը պարտադիր է
- Մրցույթի կազմ. խորհուրդն իրավունք ունի աշխատանքը հանել մրցույթից, եթե այն պարունակում է իրական անձանց նկատմամբ վիրավորանք, հակասում է ՀՀ օրենքներին
- Աշխատանքը հանվում է մրցույթից գրագողության հայտնաբերման դեպքում,
- Մրցույթի կանոնները կարող են փոփոխվել կազմ. խորհրդի որոշմամբ՝ դրա մասին սոցիալական կայքերով հայտարարելու միջոցով:

### Ջաբգերի դեպքում՝

Ձանգահարել 099933930 հեռախոսահամարով կամ գրել [armconcontest@gmail.com](mailto:armconcontest@gmail.com) էլեկտրոնային հասցեին, մեր ֆեյսբուքյան էջին: